373.1
4-24

ՀԱՍԿԵՐԻ ՄԱՆՈՒԱԼԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

VII

420

Պ. ԿԱԼՊՏԵՐԻՆ

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԳԱՄՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ԵՒ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ

Թարգմ. ՄԻՍ. ԱՍ

ԹԻՖԼԻՍ

MAR 2010

«ՀԱՍԿԵՐ»-Ի ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԳՐԱԳԱՐԱՆ

370
2048-ԿԱ

VII

Պ. ԿԱՊՏՐԻ

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ԵՒ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ

373.1
Կ-24
1004
15668
ԵՎ

Թարգմ. ՄԻՍ. ԱՍ.

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
S.S.S.R. Public Library
7 VI 1922
Ալեքսանդրապոլ, Մясницкая
Ա. ՄՅԱՍՆԻՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ԹԻՖԼԻՍ
Տպարան «Հերմէս» Մաղաքեան փողոց № 5
1906 (225)

17.05.2013

52.135

Բագրատի Ա[illegible]
Հոլիսիմեան գ[illegible]
Գ[illegible]

I

Ընտանեկան դաստիարակութեան արհեստականութիւնը եւ նրա տեսակները։

Եթէ դիմելու լինենք զանազան ազգերի ընտանեկան կրթութեան պատմութեանը, այնտեղ կընկատենք մի ընդհանուր գիծ, որ իբրև մի թել հաստատ անընդհատ անցնում է պատմութեան ամբողջ ընթացքով. այդ գիծն է ընտանեկան կրթութեան արհեստականութիւնը, որ արտայայտուել է շատ դէպքերում և անգին ազդեցութիւն արել ընտանիքի գործունէութեան վրա։

Վայրենի և կիսավայրենի ցեղերի մանկավարժութիւնը իր իսկական էութեամբ սահմանափակուել է միայն մանուկների մարմնի մասին հոգ տանելով, և այդ հոգատարութիւնն եղել է ինքնօրինակ։ Նրանք մարդկային մարմնի գործարաններն ենթարկում էին փոփոխութեան, և իւրաքանչիւր ցեղ այդ փոփոխութիւնը կատարում էր գեղեցկութեան մասին ունեցած իր իդէալի համաձայն։ Մի քանի ցեղերի դուր չէր գալիս մարդու գլխի բնական ձևը, և նրանք աշխատում էին գանգին շաքարի գլխի նման սրածայր ձև տալ. այդ իրանց հաստատ ցանկալի ձևը տալու համար գործադրում էին չափազանց չարատանջ միջոց. նորածին

մանկան գանգը աստիճանաբար և անընդհատ ամուր սեղմում էին տախտակներով։ Այդ ցեղերից ոմանց դուր չէր գալիս ականջների բնական ձևը. նրանք ձգում էին ականջները և ահագին մեծությեան հասցնում, մինչև ուսերը. ուրիշները պոկոտում էին աչքերի արտևանունքը, կամ գլխի սանդրուածքներին տալիս էին տարօրինակ և չափազանց անյարմար ձև։ Գեղեցկության համար ջարդում էին առաջին ատամներից մի քանիսը. մարմինները դաջում և նաշխում էին. ոտները փոքրացնելու համար ամուր կապկպում էին և այլն։

Յունահռոմէական քաղաքակրթության շրջանում խելացի հոգատարության առարկայ են դառնում մարմնի ներդաշնակ զարգացումն և վայելչակազմությունը։ Քրիստոնէության հաստատելովը մարմնի դաստիարակությեանը վերջին տեղն է տրվում. սկսեցին այնուհետև գլխաւորապէս և անդադար հոգ տանել հոգու մասին, մինչև անգամ մարմինը յայտարարվեց իբրև հոգու բանտ։ Ֆիզիքական և առողջապահական հիմնարկությունների բացակայության շնորհիւ ժամանակի ընթացքում հետզհետէ աւելի մեծ չափով վերականգնվեց մարմնի արհեստական խնամատարությունը, և երևացին պարիկներ (կեղծ մազեր), արհեստական խալեր, երեսի փոշի (пудръ), սնգոյր, շպար, կորսետներ, երկայն կրունկներով կօշիկներ և այլն։ Ներկայ ժամանակի գեղեցկուհին իսկապէս կիսով չափ բնական գեղեցկուհի է, իսկ միւս կիսովն՝ արհեստական, շնորհիւ իր հագուստի և առհասարակ արդուզարդի չափազանց բարդ և շքեղ լինելուն։ Մեր ժամանակի գեղեցկուհիները

դրանով են զանազանվում յոյն և հռոմայեցի գեղեցկուհիներից, որոնք իրօք գեղեցկուհիներ էին շնորհիւ բնական ֆիզիքական դաստիարակության։

Հոգու դաստիարակությունը զանազան ժողովրդների մէջ և զանազան ժամանակներում նոյնպէս կրում է իր վրա արհեստականության հետքեր։ Ամենագլխաւոր առաքինություններից մէկը, որին ընտելացնում էին ծնողները իրանց զաւակներին, հնազանդությունն էր։ Ի՞նչ է հնազանդությունը։ Հնազանդությունն է իր կամքը հպատակեցնել ուրիշի կամքին, որև է կողմնակի հեղինակության։ Հնազանդությունն ինքնըստինքեան մի անհաճոյ դրություն է, որովհետև իւրաքանչիւր կենդանի արարած ձգտում է իր գործողության մէջ իրականացնել իր սեփական կամքը, իր սեփական ցանկությունները։ Ի՞նչ հետաքրքրություն կարող է ներկայացնել իւրաքանչիւր մարդու համար կատարել ուրիշի հրամանները և ցուցմունքները. իւրաքանչիւրը սիրում է գործել այնպէս, ինչպէս ինքն է կամենում։ Ազատությունից զրկվելը, բանտարգելությունը, պարտաւորված ուրիշի կամքի համաձայն ապրելը, իր անհատականության ու ցանկությունների որև է արտայայտության համար պատիժ կրելը՝ իսկապէս մի դժբախտ դրություն է, նոյնիսկ եթէ այդ վիճակի մէջ գտնվող մարդու նիւթականը լինի լիովին ապահով։ Ուրիշի կամքին հպատակվելն անախորժ է, թէկուզ այդ կամքն լինի բարի, սնյողդողդ և հետևողական. բայց աւելի անտանելի է, եթէ այդ կամքը չար, թոյլ և փոփոխամիտ է։ Այս վերջին տեսակի յատկություններ

ունեցող կամքին հպատակելը մի՞թէ առաքինութիւն կը լինի։ Նոյն իսկ լաւ յատկութիւններով օժտուած՝ ուրիշի կամքին հպատակելը զրկում է մարդուն ազատութիւնից և այն բաւականութիւնից, որ առաջանում է իր ցանկութեան համաձայն վարելուց։ Մանուկների ղեկավարութիւնը, ծնողական հեղինակութիւնը, իհարկէ, անհրաժեշտ են, միայն թէ այն չափով, որ չափով որ նրանք անփորձ են, չեն ճանաչում իրանց շրջապատող աշխարհը, ուստի և չեն կարող խելացի վարել։ Այդ սահմանից դուրս մանուկների հպատակութեանը հասակաւորների ղեկավարութեանն և հեղինակութեանը չունի իր բաւարար հիմունքները։ Հասակաւորները միշտ այդ սահմանից անցնում են, պահանջելով մանուկներից այն, ինչ որ հազիւ թէ հարկաւոր է լինում մանուկներին, և դժուար թէ կարելի լինի այդ վարմունքը արդարացնել խելացի դատողութեամբ։

Մանուկների կրօնական դաստիարակութիւնը չափազանց կարևոր է, բայց իրական կեանքում դրուած է նա արդեօք կանոնաւոր կերպով։ Այդ խնդիրը մեր հասարակութեան շատ անդամների համար դժուար լուծելի խնդիր է։ Հասակաւորներն իրանց կրօնական զգացմունքն արտայայտում են աղօթքներով, երգերով, ժամերգութիւնով, կրօնական զրուցատրութիւններով։ Մանուկներին էլ սովորեցնում են բարեպաշտութեան միայն այդ արտաքին ձևերին, չըհոգալով հաղորդելու նրանց մանուկ հասակին ժամչելի կրօնական հասկացողութիւններ, մանաւանդ չարթնացնելով մանուկների կրօնական զգացումը։ Մանուկները մեծ մասամբ շատ

քիչ բան են հասկանում կրօնի արտաքին բարեպաշտութեան ձևերից, նրանք միայն սերտում են խօսքերը, իրացնում են արտաքին նշանները, բայց չեն հասկանում թէ այդ խօսքերն ու նշանները ինչ են արտայայտում. մէկ խօսքով, նրանք չեն ըմբռնում այդ ամենի ներքին իմաստը։ Մանուկներին սովորեցնել բարեպաշտութեան միայն արտաքին ձևերը, իհարկէ, աւելի հեշտ գործ է, քան թէ լուսաւորել նրանց սիրտն ու միտքը նրանց հասակին ժամչելի ճշմարիտ կրօնական ուսումով։ Այս խնդրի լրջութիւնը պահանջում է դաստիարակներից լուրջ ջանքերի գործադրութիւն։

Շատ ծնողներ իրանց զաւակների սկզբնական կրթութիւնը սկսում են օտար լեզուներից, սովորեցնում են մէկ, երկու և մինչև անգամ երեք օտար լեզուներ, պատճառաբանելով թէ մանկական հասակում յիշողութիւնը թարմ և սուր է, թէ մանուկն առանց դժուարութեան իւրացնում է օտար լեզուի բառերն և լաւ արտասանութիւնը, թէ ահա այդ պատճառով օտար լեզուներ սովորելու ամենայարմար շրջանը մանկական հասակն է։ Բայց արդեօք այդ տեսակ զբաղմունքները մանկական բնաւորութեան համար իսկական կարևոր պահանջ են թէ ծնողների մտքի հնարամտքը, մեծերի անձնական փորձառութեան, պահանջների ու հայեացքների հետևանքը։ Ակնյայտնի ճշմարտութիւն է, որ օտար լեզուների ուսուցումն անկարելի է ընդունել իբրև ամենարնական և համապատասխան զբաղմունք, հասմաձայն մանուկների պահանջներին։

Նոյնիսկ խաղերը, որոնք բոլորովին բնական և

անհրաժեշտ արտայայտութիւն են մանուկ հասակի բնաւորութեան, հասակաւորները աշխատում են արհեստական դարձնել։ Երեխաների համար նրանք հնարում են խաղալիքներ, աշխատում են որ այդ խաղալիքները լինեն բարդ, խրթին և խորիմաստ։ Ֆիզիքայում յայտնագործում է մի նոր գիւտ թէ չէ, իսկոյն և եթ յայտնում է երեխաների մի նոր բարեկամ և բարերար, որ այդ գիտնական գիւտը սրամտութեամբ յարմարեցնում է մանկական խաղի, և ահա նա նուիրում է երեխաներին մի նոր սրամիտ և ուսանելի խաղալիք։ Շատերին դուր չի գալիս մանկական որև է ազատ և համարձակ խաղ. նրանք աշխատում են այդ խաղը սիստեմի տակ դնել, տալով նրան խորիմաստ նշանակութիւն։ Այդպիսով հասարակ գործը խրթնացնում, խճճում են և դարձնում արհեստական։

Ընտանեկան կրթութեան յիշեալ փաստերն ակնյայտնի են, նրանց գոյութեան մէջ դժուար չէ համոզուել։ Բայց կան ընտանեկան կրթութեան արհեստականութեան ուրիշ կողմեր ևս, որոնք աւելի խոր և աւելի վնասակար են։ Անկանոն սկզբնական կրթութեան այս երկրորդ կարգի նշանները մեզ բերում են այն եզրակացութեան, որ ժամանակակից դաստիարակութիւնը ներկան զոհ է բերում ապագային, որ դաստիարակողների վրա նայում են ոչ թէ իբրև մանուկների և պատանիների, այլ իբրև ապագայ հասակաւոր մարդոց վրա, իբրև զանազան ասպարէզներում գործիչների վրա։ Դաստիարակութիւնը ձգտում է ոչ թէ զարգացնի այն, ինչ որ կայ, այսինքն՝ մանուկներին ու

պատանիներին, այլ նախապատրաստի այն, ինչ որ պիտի լինի, այսինքն՝ նախապատրաստի հասակաւոր մարդոց։ Ըստ երևութին դաստիարակութեան մասին ունեցած թէ մէկ և թէ միւս հասկացողութիւնը համարեա միևնոյն են, մերձաւորապէս համանման, բայց իսկապէս նրանք իրարից բոլորովին տարբերուում են. երկրորդ հասկացողութեամբ դաստիարակութեան գործը դառնում է արհեստական։

Մարդկային կազմուածքի կեանքը բաժանուում է հասակների։ Իւրաքանչիւր հասակ ունի իւր բնորոշ ֆիզիքական և հոգեկան կողմերը։ Հասակների բնաւորութիւնները տարբեր են։ Կան յատկութիւններ, որոնք յատուկ են միայն յայտնի հասակներին, և այդ հասակների անցնելուց յետոյ՝ անհետանում են, նրանց փոխարինում են ուրիշ յատկութիւններ, ինչպէս կաթնատամները փոխարինուում են իսկական ատամներով. բայց կան յատկութիւններ, որոնք անցնում են յաջորդ հասակներին, և միայն փոփոխուում են մարդկային կեանքի հետ՝ հետզհետէ կամ զօրանալով, կամ թուլանալով։

Երեխաները լիովին հաւատում են այն ամենին, ինչ որ նրանց ասում և խոստանում են։ Երեխաները երկչոտ են. ամեն մի նոր երևոյթ, ըստինքեան բոլորովին անմեղ և անվնաս, մանաւանդ խոշոր չափով, նրանց մէջ առաջացնում է երկիւղի զգացմունք։ Բոլոր այս յատկութիւնները զուտ մանկական յատկութիւններ են. դրա մանկական հասակի հետ անյայտանում են, չեն անցնում յաջորդ հասակներին։ Պատանիները զանազանուում են իրանց մտածողութեան

և գործողութեան գաղափարականութեամբ. նրանք կարծում են թէ միանգամից հնարաւոր է եթէ ոչ բոլորովին յեղափոխել աշխարհը, գէթ կարճ ժամանակում զգալի կերպով կերպարանափոխել նրան։ Սրանք հասակի առանձնայատուկ գծեր են, որոնք անհետանում են պատանեկութեան հետ։ Մանուկներին յատուկ է գթասրտութիւն, ճշմարտասիրութիւն. նրանք ընդունակ են որոշ տրամաբանական մտածողութեան։ Մանկութեան հասակն անցնելուց յետոյ, այս գծերը չեն անյայտանում։ այլ անցնում են յաջորդ հասակներին. այդ շրջաններում այս յատկութիւններից միքանիսը զօրանում ու զարգանում են, օրինակ՝ տրամաբանօրէն մտածելու ընդունակութիւնը, իսկ միւսները թուլանում են, օրինակ՝ ճշմարտասիրութիւնը և այլն։ Պատանին ցոյց է տալիս մեծ եռանդ և հաստատակամութիւն իր մտադրած նպատակին հասնելու ձգտման մէջ. նա ցոյց է տալիս քննական վերաբերմունք դէպի հեղինակութիւնները. նա ընդունակ է վերացական մտածողութեան։ Այս յատկութիւնները պատանեկութեան հետ չեն վերանում. թէկուզ վաղուց անցած էլ լինի պատանեկութիւնը, մեծ կամ փոքր չափով պահպանում են վերացական մտածողութեան ընդունակութիւնը, քննական վերաբերմունք դէպի շրջապատը, նպատակին ձգտելու եռանդը. հասակի առաջ գնալով այս գծերից ոմանք զօրանում, իսկ միւսները թուլանում են։ Յաջորդ հասակներին անցնող յատկութիւններն թւով աւելի սակաւ են, քան թէ անյայտացող առանձնայատկութիւնները։

Դաստիարակութիւնն ինչպէս է արդեօք վերաբերւում ժամանակի ընթացքում հասակների անյայտացող և փոխանցնող յատկութիւններին, միևնոյն թէ տարբեր եղանակով է գնահատում այդ երկու տեսակ յատկութիւններն ևս։ Հոգում է արդեօք նրանց բոլորի զարգացման մասին, թէ միայն մի քանիսի։ Դաստիարակութեան ժամանակ սովորաբար հոգում են և մշակում են հասակների այն առանձնայատկութիւնները, որոնք անցնում են կեանքի յաջորդ հասակներին, իսկ ինչ վերաբերում է հասակների առանձնայատուկ, ոչ փոխանցնող յատկութիւններին, նրանց զարգացնում են կամ դժկամակութեամբ, կամ աշխատում են խեղդել և արմատախիլ անել, համարելով նրանց ոչ թէ հասակներին յատուկ յատկութիւններ, այլ այդ հասակների պակասութիւններ։

Դաստիարակութիւնն այս կամ այն ոգով և ուղղութեամբ առաջ տանելու համար մեծ նշանակութիւն ունի որոշել դաստիարակութեան նպատակը։ Դաստիարակութեան նպատակն որոշում են զանազան կերպով։ Ասում են՝ դաստիարակողից պէտք է պատրաստենք ջերմեռանդ քրիստոնեայ, հայրենասէր և լաւ քաղաքացի, կատարեալ և բախտաւոր մարդ, ճշմարտութեան, բարութեան և գեղեցկի անկախ սպասաւոր, առաջադիմութեան ժրաջան գործիչ և այլն և այլն։ Կարիք չըկայ մի առ մի քննել թէ դաստիարակութեան նպատակի այս որոշումներից որն է ուղիղ և որն ոչ. բայց կարևոր է մատնանշել բոլոր ենթադրած նպատակների երկու ընդհանուր յատկութեանց վրա. առաջինն այն, որ

Նրանք նշանաւոր չափով հեռու են դաստիարակութեան առաջին շրջաններից, երկրորդը՝ որ շատ սակաւաթիւ են սաների այն յատկութիւնները, որոնք ուշադրութեան են առնւում դաստիարակների կողմից։ Դաստիարակութեան բոլոր ենթադրւած նպատակները դաստիարակի հայեացքն ուղղում են միայն դէպի հեռաւոր ապագան, թելադրում են թէ դաստիարակը պարտաւոր է պատրաստել իր սաներին ինչ որ նպատակի համար, որ ներկան մի հասարակ միջոց է միայն ապագայի համար և ինքնըստինքեան նշանակութիւն չունի. և եթէ ներկայում նա հասնում է կարևոր հետևանքների, դրանք այնքան գին ունին, որքան մօտեցնում են այն հեռաւոր, հազիւ առկայծող նպատակին։ Բայց ե՞րբ է ձեռք բերելու դաստիարակութեան նպատակը դաստիարակողը, օրինակ, ե՞րբ է լինելու լաւ քաղաքացի։ Անշուշտ միայն այն ժամանակ, երբ ոտք կոխի քաղաքացիական կեանքի մէջ, երբ կըկատարի որոշեալ պարտաւորութիւններ և կըվայելի դրանց համաձայն իրաւունքներ, այսինքն՝ բաւականին ուշ։ Դաստիարակողն ե՞րբ է լինելու բախտաւոր, կամ, ասենք օրինակ, առաջադիմութեան անկախ սպասաւոր։ Հաւանական է, որ նա ամենևին բախտաւոր էլ չըլինի. երբ մեծանայ, թերևս առաջադիմութեան սպասաւոր լինի, բայց այդ ևս ոչ շուտով։ Մինչդեռ ահա այդ հեռաւոր, շատ անգամ բոլորովին անիրագործելի նպատակների համար են ուղում պատրաստել դաստիարակողներին. այդպիսի հեռաւոր և անհաստատ ապագայի համար հար-

կաւոր է լինում զոհել բոլորովին հաստատ և իրական ներկան։

Դաստիարակները՝ իրանց ուշադրութիւնը կենդրոնացնելով ապագայ հեռաւոր նպատակին հասնելու վրա, բնականաբար սակաւ են գնահատում ներկայի պահանջները։ Ինչ որ իրանց աչքի տակ է, վատ են տեսնում, այսինքն դաստիարակողների հասակների իսկական պահանջները։

Դաստիարակութեան վերոյիշեալ նպատակները դեռ լիովին չեն շօշափում դաստիարակողների հասակների բոլոր յատկութիւնները, այլ միայն մի քանիսը. Մանկան բնական աշխուժութիւնը և սէրը դէպի խաղը արդեօք ի՞նչ առընչութիւն ունի քրիստոնէական բարեպաշտութեան հետ։ Որպէս զի դաստիարակողից պատրաստուի լաւ քաղաքացի, առաջադիմութեան սպասաւոր և այլն, հարկաւո՞ր է արդեօք խրախուսել նրանց մէջ յատուկ հետաքրքրութիւնը թէ զսպել. հարկաւո՞ր է արդեօք թուլացնել թէ զօրացնել երեխաների դիւրահաւատութիւնը։ Մանկական հասակին սեփական շատ յատկութիւններ ոչ մի ուղղակի առընչութիւն չունին կրթութեան ենթադրեալ նպատակների հետ. նրանց կողմնակի առընչութիւնն էլ շատ անգամ դժւար է որոշել։ Բանից դուրս է գալիս, որ հասակների առանձնայատկութիւնների մեծ մասը դաստիարակութեան նպատակներին հասնելու համար կարևոր չեն և որ այդ նպատակների համար հարկաւոր է մշակել մի քանի յատկութիւններ։ Այդ բանից ուղղակի այն է հետևում, որ դաստիարակութեան համար հար-

կաւոր են միայն մի քանի յատկութիւններ, որոնք կարևոր են դաստիարակչական նպատակների համար, իսկ մնացեալները կարելի է անտես առնել։ Այդպէս ևս լինում է դաստիարակութեան գործում՝, հասակների մնայուն և փոխանցական յատկութիւնները խնամքով են մշակւում, իսկ նրանց (հասակների) առանձնական գծերը մնում են արհամարհուած։ Գործնական դաստիարակները և ծնողները սակաւ են հոգում դաստիարակութեան ընդհանուր տեսական խնդիրների լուսաբանութեան և լուծման մասին. սրանց թւին՝ են պատկանում դաստիարակութեան նպատակի խնդիրները. այս տեսակ խնդիրները նրանք համարում են մթին և վերացական, և նրանց գիտակցութեան մէջ այնուամենայնիւ մնում է այն, թէ դաստիարակողներին հարկաւոր է պատրաստել ապագայում մի ինչ որ բանի համար և թէ սաների ոչ բոլոր առանձնայատկութիւններն են արժանի ուշադրութեան։ Ծնողները և գործնական դաստիարակները հեռաւոր ապագայի քամակից չեն ընկնում, նրանք իրանց գործունէութեան համար ընտրում են աւելի մերձաւոր խնդիրներ, որոնք փոխ են առնուած նոյնպէս ապագայից, բայց ոչ հեռաւոր. միևնոյն ժամանակ այդ խնդիրներն աւելի պարզ գործնական են։ Երեխան պէտք է սովորի դպրոցում, հետևաբար հարկաւոր է աւելի շուտ և լուրջ պատրաստել դպրոցի համար. այդ նպատակին հասնելու համար հարկաւոր է ուսուցումն սկսել աւելի շուտ և հանգամանօրէն։ Դպրոցից դուրս գալուց յետոյ նորաւարտ երիտասարդը կեանքի մէջ աջողութիւն ունենալու

համար՝ պէտք է գիտենայ յարմարուել մարդոց, հանգամանքների հետ. ուստի դպրոցից դուրս գալուց առաջ նրան հարկաւոր է ընտելացնել կարգապահութեան։ Եւ ահա մանկական հասակից սկսում են երեխային լուրջ կերպով ուսում տալ և վարժեցնել խիստ կարգապահութեան։

Ի՞նչ է պատահում արդեօք այն հասակների առանձնայատկութիւնների հետ, որոնք չեն անցնում յաջորդ հասակներին, այլ անյայտանում են երեխայի հասակ առնելովը։ Ծնողները, դաստիարակները և առհասարակ հասակաւորներն ինչպէս են վերաբերւում դէպի մանկական այդ յատկութիւնները։ Հասակաւորները բարձրից են նայում հասակների առանձնայատկութիւնների վրա, ինչպէս անվատար, տհաս և սակաւարժէք յատկութիւնների վրա։ Նրանց կարծիքով մանուկները և պատանիները բարոյապէս խակ, անկատար էակներ են. այն ամենը, ինչ որ նրանց յատուկ է ու բնորոշ, հարկաւոր է դուրս կորզել նրանց միջից, փոխարինել հասակաւորների յատկութիւններով։ Իւրաքանչիւր հասակ ունի իր առանձին հայեացքները, ճաշակը, մտածելու և խօսելու ձևը, հասկացողութիւնը գեղեցկի և բարոյականի մասին։ Իւրաքանչիւր հասակ ունի իր տրամաբանութիւնը, իր կրօնը, իր էստետիկան, իր բարոյականութիւնը։ Իւրաքանչիւր հասակում մարդն իսկական, ամբողջական և ինքնուրոյն մարդ է, և ոչ թէ զարգացման վերելք, որ տանում է դէպի իսկական, կատարեալ մարդը։ Մենք հասակաւորներս սակաւ ենք գնահատում մանուկների և պա-

տանիների մտքի և զգացմունքի առանձնայատկութիւնները, սակաւ ենք յարգում նրանց ինքնուրոյն անձնաւորութիւնը. աշխատում ենք նրանց մէջ մտցնել մեր հայեացքները և ճաշակը, մեր մտածողութեան և վարեցողութեան ձևը, մեր կրօնը, մեր էստէտիկան: Մենք համոզուած ենք մեր գերազանցութեան մէջ և պահանջում ենք նրանցից հնազանդութիւն. մենք յաճախ ծաղրում ենք մանկան պարզամտութիւնը և դիւրահաւատութիւնը. զարմանում ենք պատանու վառվռուն և յափշտակող բնաւորութեան վրա. այդ բոլորն օտարոտի և վատ է թւում մեզ, որովհետև հասակաւորներս ուրիշ տեսակ ենք մտածում և գործում: Մենք նեղութիւն չենք տալիս մեզ հասկանալու մանկութեան և պատանեկութեան առանձնայատկութիւնները. չենք թափանցում որոշ հասակի մտածման և զգացման եղանակի մէջ. չենք լուսաբանում մեզ համար, թէ որն է բնական, որն անհրաժեշտ այդ հասակներում: Եւ ինչու համար: Զէ՞ որ այն ամենը, ինչ որ յատուկ է մանկութեանն և պատանեկութեանը, կանցնի, կանհետանայ հասակի հետ. կրճատն միայն յաջորդ հասակներին անցնող յատկութիւնները: Ծնողներն էլ չեն քաշում. նրանք թոյլ են տալիս մանուկներին և պատանիներին մնալ իսկական մանուկներ և պատանիներ, ապրել իրանց հասակներին յատուկ կեանքով միայն հանգստութեան ժամերին, իսկ մնացեալ ժամանակ պատրաստում են նրանց ապագայի ինչ որ անորոշ նպատակի համար:

Մանկական և պատանեկական հասակների առանձ-

նայատկութիւնները յաճախ յայտարարւում են իբրև թերութիւններ. նրանց դէմ կռիւ են մղում, աշխատում են արմատախիլ անել:

Դեռ շատ ժամանակ չէ անցել, ինչ մանկական արագաշարժութիւնը, աշխուժութիւնը, անկեղծութիւնը համարում էին իբրև թերութիւններ և այդ յատկութիւնների համար հալածում էին մանուկներին. շատ տեղ դեռ չէ վերացել հալածանքը: Մինչև այժմ էլ թերութիւններ են համարւում մանկան հոգեկան շատ առանձնայատկութիւններ, օրինակ՝ ուշադրութեան պակասութիւնը, շտապ զատողութիւն տալը, առանց քաշելու իր ճաշակի և ցանկութիւնների մասին յայտարարելը և այլն, որոնց դէմ նոյնպէս կռւում են և աշխատում են փոխարինել աւելի պատուաւոր և վայելուչ յատկութիւններով:

Հասակների գոյութիւն ունեցող և գոյութիւն չունեցող բոլոր առանձնայատկութիւնների դէմ յաճախակի կռիւ է մղում անխնայ կերպով և սիստեմաբար: Հասակաւորներն առհասարակ սակաւ են գնահատում մանկութեան և պատանեկութեան հասակների ընթացքը. նրանք ցանկանում են, որ իրանց երեխաներն որքան կարելի է շուտով անցնեն այդ հասակները: Ծծկեր մանկան վրա նայելով, նրանք ցանկանում են, որ նա շուտով մեծանայ, սկսի ման գալ. 4-5 տարեկան երեխաներին սկսում են ուսումնարանի համար պատրաստել և զսպել նրանց [illegible] երեխայութիւնները, տեսնելով [illegible] ժամանակ մտածել ուսումնարանի [illegible]

1004
13998

ՊԵՏ. ԱՄՍՐՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
Publichnaya Biblioteka
7/3 1922
имени А. Мясникяна

Ուսումնարաններում մանուկներին և պատանիներին ուսուցանում են հասակաւորներին մատչելի ուսում և բարոյականութիւն։ Այդ ճնշումների տակ տղայ և աղջիկ երեխաներն այնպէս արագ զարգանում են, որ իրանք ևս ցանկանում են հետևեալ հասակին անցնել, ամօթ համարելով իրանց փոքրահասակ լինելը։ Հասակաւորներն շարունակ նրանց կրկնում են, թէ դուք այս կըլինէք, այն կըլինէք ապագայում, կեանքի մէջ ձեզ պէտք կըգան այս և այն յատկութիւնները. այդ պատճառով մենք ևս ձեր մէջ այդ յատկութիւնները պէտք է զարգացնենք. իսկ ինչ վերաբերում է մանկութեան և պատանեկութեան հասակների հետ չքացող առանձնայատկութիւններին, նրանք պէտքական չեն, վերջապէս դրանք առաքինութիւններ չեն, այլ թերութիւններ, որոնք իբրև արգելքներ ընկած են զարգացման ճանապարհի վրա. հարկաւոր է նրանց ոչնչացնել և փոխարինել հասակաւոր մարդու բնաւորութեամբ։

Ահա այդ հայեացքների համաձայն հնարում են սկզբնական կրթութեան սիստեմներ, հիմնում են ուսման-կրթութեան հաստատութիւններ, կազմում ուսման ծրագիրներ, որոշում են բարոյական, էստէտիկական և ամեն տեսակ ձևեր։ Երեխաները ճնշում, նեղում են հասակաւորների հնարած ձևի մէջ, որ թոյլ չէ տալիս մանկան բնութիւնը ազատ զարգանալ և զօրանալ։ Դաստիարակութիւնը այժմ բազմակողմանի չէ, այլ սահմանափակ և արհեստական, որովհետև դաստիարակողների յատկութիւնների մեծ մասը արհամարհում է, դուրս է ձգում և ոչնչացնում, իսկ փոքր մասը

միայն մշակում, թէև դրա հակառակն են պնդում, ասելով՝ որ երեխաները սովորում են գիտութիւններ, լեզուներ, երաժշտութիւն, ձեռագործ։ Փոքր հասակները ըստինքեան արժէք չունին, միայն արժէք են ստանում, նայելով թէ ապագայի համար ինչպէս են պատրաստում. այդ հասակները միայն աստիճաններ են, որոնց վրայով վեր պէտք է բարձրանայ մանուկը. որքան արագ անցնի այդ աստիճանները, այնքան աւելի լաւ։

Մարդս ներկայից շտապով գնում է դէպի ապագան. ներկան դեռ բաւականաչափ չըվայելած՝ նա քըշում է դէպի առաջ ու առաջ։ Ծերութեան հասակն է արդէն, բայց այդտեղ ևս դեռ նախապատրաստութիւնը չէ վերջացել, նրան ասում են՝ պատրաստուիր գնալու դէպի նոր անվախճան կեանք, ուր չըկայ ոչ տրտմութիւն և ոչ հառաչանք։ Եւ այդպէս մարդս իր ամբողջ կեանքում միայն պատրաստում է ապրելու և ոչ մի ժամանակ կարգին չէ ապրում։

Ընտանեկան դաստիարակութիւնը ազատ պիտի լինի որ և է արհեստականութիւնից։ Նա կատարելապէս պիտի զարգացնի դաստիարակութեան հասակների բոլոր առանձնայատկութիւնները։ Նա զգուշութեամբ և ընքշութեամբ պիտի վերաբերուի մինչև անգամ այն յատկութիւններին, որոնք անօգուտ են նոյնիսկ իրանց երեխաների համար (օրինակ՝ մանկական երկչոտութիւնը), հենց այն պատճառով, որ դա առանձնայատկութիւն է և ոչ թերութիւն։ Հարկաւոր է թոյլ տալ, որ երեխաներն անցնեն հասակների բոլոր յատկութիւնները։ Ընտանեկան դաստիարակութեան նպատակները

և խնդիրները պիտի բղխեն ոչ թէ երեխաներին օտար, կողմնակի, միայն հասակաւորների կեանքի մէջ նշանակութիւն ունեցող դիտումներից, այլ մանուկներից, նրանց անող կազմուածքից։ Ընտանեկան կրթութիւնը պէտք է օգնի մանուկների կանոնաւոր և բազմակողմանի զարգացմանը. պէտք է շօշափի բոլոր յատկութիւնները, ոչ թէ նրանցից միքանիսը. աչքի առաջ չը պէտք է ունենայ որև է նեղ և արտաքին նպատակներ, ինչպէս է՝ օտար լեզուների ուսումը կամ նախապատրաստութիւն ապագայ ասպարիզի համար։ Այս վերջին նպատակներին հասնելը համեմատաբար հեշտ է. միայն հարկաւոր է որոշ չափով հաստատամտութիւն և խստութիւն։ Բայց դժուար է դրանով օգնել երեխայի հոգեկան և ֆիզիքական կազմուածքի կանոնաւոր և բազմակողմանի զարգացմանը։ Այդ նպատակին հասնելու համար հարկաւոր է ունենալ լուրջ գիտնական պատրաստութիւն երեխայի կազմուածքի առանձնայատկութիւնների մասին. այստեղ խստութեամբ ոչինչ չէ կարելի անել։ Դեռ շատ ժամանակ չէ անցել, երբ մանուկների սկզբնական ընտանեկան դաստիարակութիւնը ոչ մի կասկած չէր յարուցանում ընտանիքում. այդ շատ հասարակ գործ էին համարում. ուստի գիտնական գրքերի ու տեսութիւնների էլ դիմելու կարիք չէին զգում։ Ասում էին՝ մեր մայրերը և տատերն իրանք իրանց մեծացել են, ինչպէս դաշտի բոյսը, նոյն եղանակով էլ դաստիարակել են մեզ։ Երեխան ինչով ուզում է թող զբաղուի, միայն թէ լաց չը լինի, միայն թէ ուտի, վազվզի, խորը քնի,—ահա ոչ հեռաւոր անց-

եալի բոլոր տեսութիւնը սկզբնական ընտանեկան կրթութեան մասին։

Այժմ այն չէ. մանուկների սկզբնական դաստիարակութեան մասին յօրինում են տեսութիւններ. այդ խնդրի մասին գրում են գրքեր, հրատարակում մասնագիտական թերթեր։ Հասարակ և բնական գործը, որի իրագործման համար սրանից քիչ առաջ պահանջւում էր միայն մայրական սէր, այժմ խրթնացել, բարդացել ու դժուարացել է։ Մայրերը պէտք է գիտենան կրթել իրանց երեխաներին։ Երեխաներ ունենալու համար խելք հարկաւոր չէ, բայց նրանց իսկապէս կրթելու համար շատ-շատերին պակասում է խելք։ Մանուկների սկզբնական դաստիարակութեան այդ տեսակ բարդութիւնը որտեղից առաջացաւ և չէ՞ դրած արդեօք արհեստական հիմքի վրա, որ իզուր դժուարացնում է մայրերի գործը։

Մանուկների սկզբնական կրթութեան բարդութիւնը առաջացել է նոյնքան բնական ճանապարհով, որքան բնական էր հնումը նրա անզարգացած ու կոպիտ վիճակը։ Երբ մարդկային հետախոյզ միտքը ուշադրութեան է առնում մի որև է առարկայ, նա յայտնագործում է նորանոր աշխարհներ այնտեղ, որտեղ առաջ կարծում էին թէ տիրում է միայն անսահման դատարկութիւն։ Վերցնենք ամենահասարակ մի օրինակ։ Մենք բոլորս ևս ապրում ենք տներում, օգտւում ենք ժամանակակից շինութիւնների յարմարութիւններով, և ըստ երևութին, կարծես, լաւ ճանաչում ենք տան կազմութեան մասերը, թէ ինչպէս է նա շինած։

Բայց փորձեցէք ինքներդ տուն շինել, այսինքն՝ գնել նրա համար հարկաւոր բոլոր նիւթերը և հետևել ու հսկել շինութեան կառուցման գործին, այն ժամանակ կըտեսնէք որ ձեր առաջ բացւում է նոր երևոյթների մի ամբողջ աշխարհ։ Դուք ապրում էիք տան մէջ, օգտւում էիք նրա յարմարութիւններով, դուք համարեա կոյրի նման էիք, բացի ընդհանուր ուրուագծից՝ դուք համարեա ուրիշ տեղեկութիւն չունէիք տան մասին։ Ուշադրութեամբ հետևելը շինութեան ընթացքին բացեց ձեր աչքերը։ Նոյնն էլ պատահել է մանուկների սկզբնական կրթութեան գործում։

Մանուկների կեանքն ուսումնասիրող բանասէրներն որքան երկար ու լուրջ դիտում և քննում էին մարդու մանկական հասակը, այնքան աւելի համոզւում էին որ այդ հասակն երկարում, ձգւում և շրջանների է բաժանւում։ Փոխանակ միակերպ, միաձոյլ և անորոշ երևոյթների, նրանք մանկան մէջ յայտնագործեցին զանազան յատկութիւններ, բնոյթներ, ուղղութիւններ և ձգտումներ։ Այսպէս յայտնւեց, որ մանուկը չափազանց բարդ էակ է, որի կեանքը չէ կարելի ամփոփել այն խօսքերով, թէ նա միայն ուտում է, վազվզում, քնում և աճում։ Մարդու հետախոյզ միտքը դիտում է մանկան կարծես խոշորացոյցով, գտնում է նրա մէջ բնորոշ առանձնայատկութիւններ, մինչև անգամ աչքի ընկնող գծեր։ Այդ գործողութիւնն անհրաժեշտ է, զանազանող և վերլուծող մտքի անխուսափելի պտուղն է այդ։ Նրանից խուսափել, նրան աչքաթող անել և նրանից ազատւել անկարելի է։ Հարկ կը լինէր

կանգնեցնել մարդկային միտքը, որպէս զի մարդը կարողանար ազատուել իրան այդ տեսակ հետախուզութիւններից։ Որքան իզուր կը լինէր զոչել՝ կանգ առ ժամանակ, մի՛ անցնիլ, երիտասարդութիւն, այնքան էլ իզուր կը լինէր կանգնեցնել մարդու մէջ հետախոյզ մտքի շարժողութիւնը։

Մանկան կազմւածքի ֆիզիքական կեանքը և գործունէութիւնը վաղուց ընդհանուր ձևով յայտնի էին. բայց աւելի ուշադիր և մանրազնին ուսումնասիրութիւնը լուսաբանեց շատ նոր երևոյթներ և պայմաններ, որոնցից կախւած է մանկան մարմնի գործարանների կանոնաւոր և աջող զարգացումը, ցոյց տւեց մի կարգ միջոցներ նախապաշտպանելու երեխաների քնքոյշ գործարանները պատահական զանազան վնասներից։ Առաջին և գլխաւոր տեղը բռնում է երեխաների լաւ և առատ սննդառութիւնը. առաջացաւ մի ամբողջ գիտութիւն՝ թէ ինչպէս պէտք է խնամել մանկան բարդ և շուտով վնասւող կազմւածքը։ Մանկան սկզբնական դաստիարակութեան համար պէտք է օգտւել գիտութեան այդ ճիւղից։ Առաջին խնդիրը պէտք է լինի պատրաստել ամրակազմ, դիմացկուն, արագաշարժ, վազվզող և խաղալ սիրող երեխաներ, որոնք ճարպկութեամբ գործածել գիտենան իրանց մարմնի բոլոր գործարանները։

Երեխան ամենից առաջ պիտի լինի ինչպէս մի պնդակազմ և ուժեղ կենդանի, լաւ վազող, ցատկող, գոռգոռացող, նոյնիսկ մասամբ ֆկուարար, ապա դրանից յետոյ կարելի կը լինի նրա մէջ հաստատել հոգեկան

բոլոր առաքինութիւնները։ Բոլորովին իրաւացի է Ռուսոյի այն նկատողութիւնը, թէ նախ քան իմաստասէր պատրաստելը, պէտք է պատրաստել չարաճճի։ Բնական կարգով երեխաների մէջ ֆիզիքականն առաջին տեղն է բռնում, նա նախընթաց է հոգեկանին։

Մանկան հոգեկան կողմը ընդհանուր ձևով նոյնպէս յայտնի էր վաղուց հետէ, բայց այդ տեղեկութիւնները շատ աղքատ էին։ Մանկան հոգեկան կեանքն սկիզբն է հասակաւոր մարդու. այդ էր այն բոլոր տեղեկութիւններն, որ ունէին ծնողներն այդ առարկայի մասին։ Բայց թէ ինչ է այդ սկիզբն, ինչով է զանազանւում մանկան հոգեկան կեանքը հասակաւոր մարդու հոգեկան կեանքից, այդ մասին տեղեկութիւնը շատ սակաւ էր. մանկան հոգեկան կեանքի մասին գիտութեանն այնքան պակասաւոր էր, որ չէր կարողանում բացատրել մանկան ստեղծագործական ունակութեան սկզբնաւորութիւնները, բնաւորութեան առանձնայատկութիւնները, նրա եսասիրական և բարեսիրական զգացմունքների սաղմերը։ Ներկայումս մանկան հոգեկան աշխարհը բաւական չափով, թէև ոչ լիովին, բացած է մեր առաջ, մանկան հոգեկան կողմի շատ երևոյթներ արդէն լուսաբանուած և հասկացուած են։ Յայտնւում է որ մանկան հոգեկան կազմուածքն ոչ պակաս բարդ է, քան թէ նրա մարմնի ֆիզիքական կազմուածքը, որ նրա մարմնական գործարանների այլազանութեանը համապատասխան է նրա հոգեկան կեանքի զանազանակերպութիւնը։ Եթէ մանկան մարմնի գործարանները քնքուշ և փաստելու դիւրա-

թեք են, հօ շատ աւելի հեշտ և բազմաթիւ են հոգեկան գործողութիւնների բազմատեսակ աղաւաղումները և շեղումները կանոնաւոր ընթացքից։

Մանկան սկզբնական դաստիարակութեան նպատակն է հասկանալ որ նա ֆիզիքական և հոգեկան մի ինքնուրոյն կազմուածք է, ուստի և պարզ պէտք է ըմբռնել նրա ամենագլխաւոր առանձնայատկութիւնները և զարգացման ընդհանուր ընթացքը, պէտք է պաշտպանել նրան ամեն տեսակ անկանոնութիւններից և վնասակար ազդեցութիւններից, պէտք է նպաստել նրա բազմակողմանի և օրինաւոր աճմանը։ Այդ մի բարդ գործ է և հնարաւոր է միայն մարդու մասին մի կարգ ընդարձակ գիտութիւնների (մարդաբանութեան) օգնութեամբ։ Այդպիսի սկզբնական դաստիարակութիւնը, ի հարկէ, չի լինի արհեստական, մտացածին, այլ մարդկային հետախոյզ մտքի անհրաժեշտ հետևան, օրգանական գործունէութիւն։ որ յենւում է գիտութեան վրա։ Այդ տեսակ գործունէութիւնը հայրերից և մայրերից պահանջում է լուրջ պատրաստութիւն, մանաւանդ մայրերից, որոնց վրա գլխաւորապէս ընկած է մանուկների սկզբնական դաստիարակութիւնը։ Միևնոյն ժամանակ մանկավարժական դրականութեան պարտաւորութիւնն է մայրերի համար սկզբնական դաստիարակութեան մասին կազմել համաձայն օժանդակ գրքեր և ձեռնարկներ։

Այդպէս, մանուկների սկզբնական դաստիարակութիւնը պէտք է հեռու լինի որ և է արհեստականութիւնից. նա պէտք է լինի օրգանական մի գործու-

նէութիւն, որ աչքի առաջ ունի դաստիարակելի հասակների բոլոր առանձնայատկութիւնները, ոչ թէ նրանցից միայն մի քանիսը՝ և հաստատուած պէտք է լինի մարդու մասին եղած գիտութիւնների վրա։ Ուրեմն դաստիարակութիւնը պիտի լինի անհատական։

Մեզանից իւրաքանչիւրիս ուսերի վրա ծանրացած է մեր առանձնական ժառանգականութիւնը։ Մեր ետևը կանգնած են մի շարք նախահայրեր, որոնցից իւրաքանչիւրն ունեցել է իր առանձնայատկութիւնները։ Այդ առանձնայատկութիւններն անդրադառնում են մեր մարմնական և հոգեկան ընդունակութիւնների վրա, մեր նախահայրերը շարունակում են ապրել մեր մէջ, ինչպէս մենք պէտք է ապրենք մեր սերունդների մէջ։ Ժառանգական յատկութիւնները կազմում են մեր առանձին գծերը, որոնցով մենք տարբերւում ենք ուրիշներից։ Ժառանգական առանձնայատկութիւնները լինում են երկու տեսակ—անձնաւորութեան բազմակողմանի զարգացման համար նպաստաւոր և աննպաստ։ Առաջին տեսակի յատկութիւնները պէտք է պահպանել և ամրապնդել, երկրորդ տեսակինը՝ ճնշել և մինչև անգամ արմատախիլ անել։ Զանազան ժառանգական յատկութիւնների վրա աւելանում են և անձնաւորութեան զարգացման առանձնայատկութիւնները, որոնք իւրաքանչիւրի համար մասամբ ինքուրոյն են, որոնք նոյնպէս իրանց առանձին կնիքն են դնում մեր վրա։ Այսպէս՝ անհատականութիւնը կազմւում է ժառանգական առանձնայատկութիւններից և իւրաքանչիւրի զարգացման առանձնութիւններից։ Դաստիարակու-

թեան ժամանակ անձնական առանձնութիւնները պէտք է աչքի առաջ ունենալ, եթէ ոչ՝ նա համապատասխան չի լինի որոշեալ անձի պահանջներին, կը լինի՞ շաբլօնական, չափազանց վերացական և անպէտք։ Որոշեալ հանգամանքներում հարկաւոր է ընդհանուր օրէնքները ձևափոխել և յարմարեցնել անհատականութեան։ Անհնար է անհատական գիտական մանկավարժութիւն ստեղծել, որովհետև գիտութիւնը գործ ունի ընդհանուրի հետ և ոչ մասնաւորութիւնների։ Դաստիարակութեան ընդհանուր սկզբունքները յարմարացնել որոշեալ անհատի առանձնայատկութիւններին՝ կախւած կըլինի ծնողների և դաստիարակների ճարտարութիւնից և նրանց ստեղծագործական ոգուց։ Այդ իսկ պատճառով ընտանեկան դաստիարակութեան համար մարդ որքան և զինւած լինի գիտական սկզբունքներով, այնուամենայնիւ ժամանակներին դաստիարակողների համար կը մնայ դարձեալ բաւական ընդարձակ ասպարէզ, ուր մեծ գործ կարող են կատարել նրանց ստեղծագործական և խորամուխ ոգին, ճարտարութիւնը, վարւեցողութեան եղանակը և փորձառութիւնը։ Անհրաժեշտ է աւելացնել, որ դաստիարակութեան գործում անձնական ստեղծագործական ոգին արդիւնաւոր կը լինի, եթէ միայն դրա հետ միացած է և գիտական ընդարձակ պատրաստութիւն։ Մի որոշ անձնաւորութեան կրթութեան համար կարելի է գործ դնել միայն գիտական ընդհանուր սկզբունքներ և ոչ թէ սեփական մտացածին ու ինքնահնար սկզբունքներ։ Այդպէս, կանոնաւոր ընտանեկան դաստիարակութեան ամենագլխաւոր պահանջը,

ամենագլխաւոր խնդիրն այն է, որ նա լինի օրգանական-հատական։

II

Ընտանեկան դաստիարակութեան առաջին հիմունքը։

Մարդը՝ լինելով օրգանական անկախ և առանձնացած մի ամբողջութիւն՝ արտայայտում և զարգացնում է իր օրգանական-անհատական առանձնայատկութիւնները միայն անբաժան միացած թէ հասարակութեան և թէ արտաքին բնութեան հետ, որոնց մէջ ինքն ապրում է։ Դրա համար էլ արհեստականութիւնից զերծ, կանոնաւոր և գլխովին բնական դաստիարակութիւնը հնարաւոր է, միայն երբ նա անբաժան է կեանքից և միացած է հասարակութեան և արտաքին բնութեան գործունէութեան հետ։

Կանոնաւոր դաստիարակութիւնը անպատճառ պէտք է որ լինի հասարակական։ Երեխան պէտք է մեծանայ և զարգանայ իւր հասակակիցների հետ։ Մենակ մեծացած երեխան, այսինքն՝ այն երեխան, որ մեծանում է հասակաւորների շրջանում առանց ընկերների, մի անբախտ երեխայ է. նա նման է ձկան, որին ջրից հանել ձգել են ուրիշ հեղուկի մէջ. թէև այդ հեղուկը լինի էլ շատ գրգռեցուցել, բայց յատուկ չէ նրա կազմուածքին։ Երեխայի անընդհատ միայն հասակաւորների հետ լինելը վնասակար է նրա համար։ Հասկաւորներն

ունին իրանց յատուկ շահերն ու խնդիրներն, որոնք երեխայի համար անբնական և անհետաքրքիր են. հասակաւորների մտքերը և զգացումները պարզ և հասկանալի չեն երեխային։ Հասակաւորները սովորաբար չըգիտեն վարուել երեխաների հետ, կամ չափազանց շատ և յաճախ խրատներ են կարդում նրանց գլխին, արգելում են, թոյլ չեն տալիս որևէ ազատ քայլ անելու, կամ չափից դուրս փայփայում ու համբուրում են, ընքշացնում ու երես տալիս. երբեմն նրանց շշմեցնում են բազմաթիւ ու բազմազան տպաւորութիւններով, երբեմն էլ չափազանց սահմանափակում են նրանց հորիզոնը։ Հասակաւորը երեխաների ընկերութեան մէջ ստիպւած միշտ աշխատում է յարմարուել, նրանց հասկանալի լինել, երևալ միշտ խելացի, գիտուն, առաքինի, և իր հասակակիցների մէջ է միայն իրան ազատ զգում։ Երեխան ևս հասակաւորների ընկերութեան մէջ իրան լաւ չէ զգում, նա միշտ իրան զոռ է անում նրանց հասկանալու և նրանց հասնելու. նա էլ իր կարգին ստիպւած է լինում կեղծ փայտէ ոտների վրա բարձրանալու, որպէս զի մեծերին հաւասարւի։ Երեխան իրան բոլորովին լաւ և ազատ է զգում միայն երեխաների հետ։ Հասակաւորը երեխաների հետ միշտ ստիպւած իրան ցած և զգուշ է պահում. երեխան էլ հասակաւորների հետ արհեստական կերպով իրան ձգում, երկարացնում ու լարում է, որ իր համար անորոշն ու անհասկանալին հասկանայ։ Թոյլ տանք իւրաքանչիւրին իրանց բնական հասարակութեան մէջ մնալու, հասակաւորին՝ հասակաւորների, երեխաներին՝

երեխաների, այլապէս կեղծիք ենք մտցնում թէ հասակաւորի և թէ երեխայի կեանքի մէջ։ Երեխաները մտաւոր և բարոյական կողմից աննկատելի կերպով միմեանցից շատ բան են սովորում, և այդ երեխայական փոխադարձ ուսուցումը չէ կարելի փոխարինել հասակաւորների որև է՝ նոյնիսկ ամենախորիմաստ դասերով։ Միասին ապրող երեխաները և հասակաւորները չեն կարող լիովին պարզ հասկանալ միմեանց. և այդ պատճառով հասակաւորները նոյն իսկ չեն կարող մանկութեան մի քանի կողմերը շօշափել։ Թող երեխաները իրանք իրանց խաղան, ըստ կարելոյն իրանք իրանց ուսանեն, թող իրանք իրանց օգնեն, թող իրանց գլխի ճարը տեսնեն, միայն՝ իհարկէ հասակաւորների անհրաժեշտ օգնութեամբ և ղեկավարութեամբ։ Մենք այնքան սակաւ ընդունակ ենք միասին գործ բռնելու, մեր մէջ այնքան սակաւ զարգացած է հասարակական գործունէութեան ընդունակը, այնքան հեշտութեամբ միմեանցից բաժանւում, ցրւում ենք ու պատահած առաջին դժւարութեան դէպքում երեսի վրա ձգում ընդհանուր գործը, որ պարտական ենք մեր երեխաների մէջ զարգացնել և ամրացնել հակառակ յատկութիւնները։ Ամենից առաջ երեխանների մէջ պէտք է դաստիարակել ընկերակցութիւն, նրանց մէջ պէտք է զարգացնել և ամրացնել թէ անձնական ինքնօգնութեան և թէ հասարակութեան օգնելու ընդունակութիւնը։ Իսկական մարդը նա է, ով զօրեղ է, ինքնավստահ, անվեհեր, և ովոր այդ յատկութիւններն

երևան է հանում ընդհանուր և հասարակութեան համար օգտակար գործերում։

Որովհետև երեխաների մէջ հասարակական ոգի դաստիարակելը շատ կարևոր խնդիր է, ուստի մենք անհրաժեշտ ենք համարում փոքր ինչ երկար կանգ առնել այդ կողմի զարգացման վրա մանուկների սրկզբնական դաստիարակութեան ժամանակ։

Մարդկային յարաբերութիւնների մէկ ձևը պետութիւնն է։ Պետական ձևի, կեանքի նշանակութիւնը մարդկութեան համար մեծ է և բարերար, բայց մարդոց յարաբերութիւնների այդ ձևը միայն չէ կարող մարդուն բախտաւորացնել։ Պետութեան մէջ առանձին անհատը կլանւում է. պետութիւնն ունի այնպիսի ընդհանուր, ընդարձակ, անդէմ շահեր, որոնց հասնելու համար չէ կարող ուշադրութիւն դարձնել առանձին անհատների վրա. սրանք պէտք է ծառայեն պետութեան ընդհանուր շահերին, պէտք է իրանց զոհ բերեն այդ շահերին։ Պետութիւնը չէ կարող նպաստել անհատի զարգացմանը, որովհետև նա անհատների վրա նայում է իբրև հասարակական շինութեան նիւթի վրա։ Պետութեան շահերին զուգընթաց գնում են անհատական շահերը։ Անհատը չէ կարող ամբողջովին պետութեան անդամը դառնալ, ապրել միմիայն նրա շահերով և հոգսերով. նա ունի իւր սեփական հոգսերն ու շահերը, որոնք յաճախ չեն համապատասխանում պետութեան շահերին։ Ծագում է կռիւ անձնական և պետական շահերի մէջ, անհատը աշխատում է խախտել պետութեան շահերը, գերակշռութիւն տալով անձնական շահերին։

Անհատն չէ կարողանում վերջնականապէս կանոնաւոր յարաբերութեան մէջ գտնուել պետութեան հետ, նա չէ կարողանում թէ իր շահերը պաշտպանել և թէ ճըշմարտութիւն պահպանել դէպի պետութիւնը. անհատը միշտ ստիպուած է լինում կամ իրան զոհել պետութեանը, կամ պետութիւնը իրան. իրան զոհել պետութեանը համար արդէն չափազանց մեծ առաքինութիւն է, իսկ պետութիւնը զոհել իրան՝ այդ էլ չափազանց շահասիրական է։

Պետական և անձնական շահերի մէջ ընկած են հասարակական շահերը։ Նրանք այնպէս ընդարձակ չեն, ինչպէս պետականը, և այնքան էլ նեղ ու սահմանափակ չեն, որքան անձնականը։ Նրանք դուրս են հանում անհատին իր անձնական փոքրիկ ու նեղ շահերի շրջանից՝ մտցնում են նրան միասնական գործունէութեան ընդարձակ ծովը. նրանք մի բնական միջանցք են անձնական շահերից դէպի պետականը։ Պետական շահերը լինելով ամենաընդարձակ և ընդհանուր, նրանց չըպէտք է համարել ամենավսեմը և կարևորը մարդկային կեանքի մէջ։ Պետական շահերը մեծ չափով նիւթական և ձևական բնաւորութիւն ունեն. նրանց առարկան կազմում են յաճախ մարդկային բազմութիւնների բարեկեցութիւնը և նիւթական ապահովութիւնը. դրանք ի հարկէ նոյնպէս բարձր խնդիրներ են, բայց հասարակական շահերը նրանով են կարևոր, որ միացնում են անձնական սկզբունքները հասարակաց շահերի հետ, ուրիշի շահերի հետ միասին նրանք բաւականութիւն են տալիս անձնական ճաշակներին, հայեացքներին և պահանջներին։ Այդ իսկ պատճառով հասարակական

շահերը ընտանի են առանձին մարդոց, աւելի հասկանալի են նրանց, աւելի սիրելի նրանց սրտին և մտքին, քան թէ պետական շահերը։ Հասարակական շահերը կենդանի գործունէութեան, ոգևորութեան, անձնական ձեռներէցութեան աղբիւր են։ Երբ մարդ ապրում է միայն պետական շահերով՝ կեանքն ձանձրալի և տխուր է լինում. պետական կեանքի եղանակը չափազանց միակերպ և ուղղագիծ է. դրան հակադիր են հասարակական բազմատեսակ և կենդանի շահերը։ Լի կեանքով մարդ ապրում է միայն այն ժամանակ, երբ նա գործունեայ անդամ է և՛ պետութեան և՛ հասարակութեան։ Կարիք չըկայ ասելու, որ մենք աւելի շատ ապրում ենք մեր անձնական շահերով, աւելի սակաւ պետական, իսկ ամենաանուազ՝ հասարակական շահերով. այդ պատճառով էլ մեր կեանքն այնպէս անգոյն ու աղքատիկ է. մենք յաճախ չենք կարողանում ըմբռնելու կեանքի էութիւնը. մինչև անգամ կեանքը մեզ անհամ է թուում, և ձգտում ենք դէպի անգոյութիւն. Հասարակական շահի բացակայութիւնը՝ բարոյականութեան պակասաւոր կողմ է։ Պետութիւնը արգելում է յանցանքը և պատժում է յանցաւորին, բայց չէ վարձատրում առաքինութեան համար։ Ով յանցանք չի գործում և վճարում է պետութեան տուրքն ու հարկը, պետութեան հայեացքով նա առաքինի մարդ է. բայց միևնոյն ժամանակ նա կարող է լինել հասարակութեան ամենաքնասակար անդամը, ունենալով կորստաբեր ազդեցութիւն իր հասարակական գործառնութեամբ։ Այն մարդը, որ եսական շահերից դուրս չէ ճանաչում

հասարակական շահեր, նա իր գործունէութեան մէջ չունի խելացի, ընդարձակ և ղեկավարող սկզբունքներ, որովհետև պետական սկզբունքները բաւական չափով բացասական են և շատերի համար ևս պարզ ու համոզեցուցիչ չեն։

Հասարակական շահերը չըպէտք է նոյնացնել բարոյական շահերի հետ։ Հասարակական շահերը կարող են լինել զանազան արժէքի. նրանք կարող են լինել և բարոյական, որովհետև բարոյական պատէրները որոշեալ հասարակական գործունէութեանց երաշխիք են. նրանք բարոյականութեան վերաբերմամբ կարող են լինել և անտարբեր, երբ վերաբերում են գիտական առարկաների, գեղարուստի, առևտրի և մարդկային կեանքի զանազան կողմերին. նրանք կարող են լինել բարոյականութեան հակառակ, երբ նրանց առարկան է մէկ դասակարգի կամ կուսակցութեան բարեկեցութիւնը ի հաշիւ ուրիշ դասակարգերի և կուսակցութիւնների։

Երբ խօսք է լինում հանրակեցութեան մասին, իսկոյն և եթ մարդ մտաբերում է Արիստոտէլի խօսքերը թէ մարդը հասարակական էակ է։ Այդ խօսքերի հիման վրայ, ուրեմն կարիք չըկայ հոգալ մարդու մէջ զարգացնելու հանրակեցութիւնը, որովհետև այդ նրա բնութեան իսկական յատկութիւններից մէկն է. միայն արգելք չըպէտք է լինել այդ բնածին յատկութեան երևան գալուն, իսկ զարգանալ նա կարող է ինքնիրեն։ Այդպէս է իբր թէ մարդու բնութիւնը։

Մենք չենք կարող համաձայնուել վերոյիշեալ կար-

ծիքի հետ։ Մարդու բնութիւնն աւելի եսական է, քան թէ հասարակական. մարդկային բնութեան հասարակական տարրերը շատ թոյլ են համեմատած եսականի հետ։ Մարդն ի բնէ ունի բազմաթիւ պահանջներ, որոնց կարող է բաւականութիւն տալ միայն ուրիշ մարդոց օգնութեամբ, նրանց հետ միասին։ Բայց դեռ այդ պահանջները չեն առաջացնում ընդարձակ հանրակեցութիւն, չընայելով դրան մարդը հակամիտ է առանձնակեցութեան, կղզիացած կեանքին։

Ըստ երևոյթին բնական պահանջները պէտք է որ շատ վաղ սերտ կերպով մտերմացնէին և միացնէին տարբեր սեռի անձերին այն բջիջի մէջ, որ կոչւում է ընտանիք։ Բայց իսկապէս այդպէս չէ եղել. երկար ժամանակ ընտանիքը գոյութիւն չունէր, իսկ սեռերի մէջ մարմնական յարակցութիւնը եղել է կարճատև. կրքի թափն անցնելուց յետոյ մարդը թափառում էր դարձեալ միայնակ, հանդիպման ժամանակ կասկածանքով նայելով իր ընկերակիցներին։

Սկզբնական առանձնակեցութիւնը հետզհետէ տեղի է տալիս և մարդը հասնում է ընտանեկան կեանքի շրջանին։ Հիմա էլ յայտնւում է առանձնակեցութեան մի ուրիշ ձև, ընտանեկան առանձնակեցութիւն։ Ընտանիքը մարդու համար լինում է նրա ամբողջ աշխարհը. նրա շահերը զուտ ընտանեկան են, նրա ասուածները ընտանեկան են, նրա լեզուն կրում է մի առանձին ընտանեկան կնիք։ Բացի ընտանիքից նա ոչոքի չէ կամենում ճանաչել, նրա ամբողջ թաղաւորութիւնը, նրա աշխարհը ընտանիքն է։ Այդ շրջանում

առանձին ընտանիքները դեռ ևս չէին միացել աւելի ընդարձակ դաշնով։

Ընտանեկան եսականութիւնը աստիճանաբար յաղթահարւում է, ընտանիքներն միանում կազմում են ազգեր, ցեղեր։ Այն ժամանակ երևան է գալիս ցեղական եսականութիւնը. մէկ ցեղ մի ուրիշ ցեղի վրա նայում է թշնամաբար, դորիացին յոնիացուն է ընդունում իբրև թշնամի, հռոմայեցին՝ էտրուսկին։ Երբ միանում են ցեղերը, սկսւում է թշնամութիւն ժողովուրդների մէջ։ Օտար, նոյն իսկ դրացի ժողովուրդները յոյնի համար բարբարոսներ էին, հռոմայեցիների համար՝ թշնամիներ և հակառակորդներ։ Նոյն իսկ ներկայումս գերմանացին խէթով է նայում ֆրանսիացուն, ֆրանսիացին՝ գերմանացուն, երկուսին ևս թակարդ է լարում անգլիացին և այլն։ Լայն, ժարդուն արժանավայել հանրակեցութիւնը դեռ շատ անկատար դրութեան մէջ է, որովհետև՝ եթէ հասկանանք հանրակեցութիւնը լայն մարդասիրական մտքով կը տեսնենք որ ոչ միայն օտար ժողովուրդների մէջ դեռ գոյութիւն ունեն միմեանց դէմ հակահասարակական ձգտումներ և ընթացք, այլ և նոյն համարիւն ժողովրդի անդամների մէջ։

Եթէ դիտենք երեխաներին, կը տեսնենք, որ նրանք իրանց հասակի առաջին տարիներում վարում են բաւական փակ կեանք, հասարակութեան մէջ լինելու կարիք չեն զգում։ Նրանք սիրում են որ մէկը լինի իրանց մօտ, մասնակցի իրանց խաղերին և զարճութիւններին. բայց թէ այդ մէկն ով կըլինի, իրանց [illegible] այ թէ՞ մի ուրիշը, այդ միևնոյն է։

մէջ ընկերներ նրանց հարկաւոր չեն, թող լինի միայն մէկը, որ նրանց զարճացնի, զբաղեցնի։ Հասակակիցների ընկերութեան մէջ լինելու պահանջը յայտնւում է աւելի ուշ, 5—6 տարեկան հասակում. այն ժամանակ երեխաներն արդէն, ուղղակի հրճւում են ընկերութեամբ։

Բայց և այդ հրճանքը խիստ եսասիրական է. երեխան ընկերութիւնը սիրում է այն խաղերի համար, որ խաղում են միասին, այն բաւականութիւնների համար, որ նա ստանում է ընկերակցական խաղերից, բայց ոչ իրանց՝ ընկերների համար։ Նա հանդիստ սրտով բաժանւում է նրանցից, հեշտութեամբ փոփոխում է ընկերներին, ամառուայ ընկերներին փոխում է ձմեռուայ ընկերների հետ, դպրոցական ընկերակիցներին հասարակ ծանօթների հետ, և դրա համար մի առանձին վիշտ չի զգում. պարզ է որ ընկերութիւնն երեխայի համար զարճութիւն և բաւականութիւն ստանալու միջոց է, բայց իրանք ընկերները նրա համար սակաւ նշանակութիւն ունեն։

Մինչդեռ ընկերակցութեան զարգացման համար անհրաժեշտ է, որ երեխաները գնահատեն ոչ միայն բաւականութիւնը, որ ստանում են ընկերութիւնից, այլ և ընկերներին, հասկանան նրանց վիճակը, հետաքրքրուեն նրանց վշտով և նրանց ուրախութեամբ։

Այդ նպատակին հասնելուն ի միջի այլոց՝ ուղղաւած պիտի լինի դաստիարակութիւնը։

Երեխաների մէջ հանրակեցութիւն զարգացնելու առաջին պայմանն այն է, որ երբ երեխան պահանջ է

զգում հասակակիցների ընկերութեան, պէտք է հնարաւորութիւն տալ այդ պահանջը լրացնելու։ Այն երեխան, որ մեծանում է հասակաւորների շրջանում եւ սակաւ է գտնւում երեխաների ընկերութեան մէջ, զուրկ է մեում կանոնաւոր զարգացման ամենաէական պայմանից։ Երեխաների ձգտումը դէպի ընկերութիւնը, ինչպէս վերը նկատեցինք, եսասիրական բնաւորութիւն ունի. բայց նա այն կարեւորութիւնն ունի, որ՝ երեխային մտցնելով հասարակութեան մէջ, սակաւ առ սակաւ ընտելացնում է հասկանալ ուրիշի շահերը, սովորեցնում է միասնական գործունէութեան։ Երեխայի սկզբնական անսահման եսասիրութիւնը՝ շփւելով նոյնանման եսասիրութիւնների հետ, հեռզհետէ թուլանում, չափաւորւում է. երեխայի գիտակցութեան մէջ սղոսկում է այն միտքը, թէ ոչ թէ ամենքն և ամեն բան աշխարհի երեսին ստեղծւած են միայն իր բաւականութեան համար, այլ կան ուրիշ շատերն ևս, որոնք ունեն նոյն ցանկութիւններն և նոյն իրաւունքները, ինչ որ ինքն ունի։

Որպէսզի երեխան հանրակեցութեան զարգացման համար ընկերակցութիւնից կարողանայ քաղել ամենաշատ օգուտ, նրան բոլորովին ազատ պէտք է թողնել որ իր համար ընտրի ընկերներ և բարեկամներ, որոնք նրա մերձաւոր խաղակիցները պէտք է լինեն։ Շատ յաճախ ծնողներն, իբրև թէ իրանց զաւակների օգտի համար, բայց իսկապէս ի վնաս նրանց, նրանք վզին կապում են ընկերներ, յորդորում են ընկերանալ և բարեկամանալ այս ինչի, այն ինչի հետ, մինչդեռ իրանք զաւակները որ և է հակամտութիւն

չեն տածում դէպի այդ անձնաւորութիւնները. լինում է որ երեխան համակրում է իր այս ինչ ընկերոջը, իսկ ծնողներն աշխատում են խախտել արդէն նրանց մէջ սկսւած մտերմութիւնը, իրանց զաւակի համար անյարմար համարելով այդ անձի ընկերութիւնը և բարեկամութիւնը։ Այդպիսով հասարակական զգացման զարգանալու հէնց առաջին րոպէում երեխայի գիտակցութեան մէջ սղոսկում է կեղծիք, երեխան զգում է իրան բռնադատւած, և հասարակական բոլոր յարաբերութիւնները թւում են նրան ձանձրալի և անհաճոյ. այնուհետև լաւ է համարում միայնակ մնալ, քան թէ խաղալ և ժամանակ անցնել այնպիսի ընկերոջ հետ, որն իրան հաճելի չէ։

Եթէ երեխան ընկեր է ընտրել իր ազատ կամքով և սրտի ցանկութեամբ, այն ժամանակ երկու ընկերներն միասին շատ գործի են ձեռնարկում, միասին զբաղւում են կամ թէ միմեանց օգնում, միասին զբաղնում են, խաղում են, պատրաստւում են որև է բան կազմակերպելու և այլն։ Մանկական այդ գործերը ոչ միայն չըպէտքէ խանգարել, այլ, ընդհակառակը, հարկաւոր է նրանց օգնել, խրախուսել, որ նրանք իրագործեն իրար տւած խոստումները, ի կատար ածեն միասնական աշխատանքները։ Այդպիսի միասնական աշխատանքների մէջ է կայանում իսկապէս հասարակական գործունէութեան սկզբնաւորութիւնը, որովհետև նրանք ձեռնարկւում և գլուխ են բերւում ազատ, սեփական ձեռներէցութեամբ. գործի մէջ իւրաքանչիւր մասնակիցն աշխատում է յարմարւել ընկերոջը, նրա հետ միասին

աշխատել, որպէսզի, ըստ կարելոյն, ընդհանուր գործը հաւասար չափով արկուսի գործունէութեան հետևանքը լինի։ Միարան աշխատանքն առաջացնում է համոզմունք, թէ միասին գործել աշխատելն աւելի հեշտ է և աւելի ուրախ. եթէ որևէ արգելք է պատահում, աւելի հեշտ է նրան հեռացնել. եթէ գործը աջողութեամբ է վերջանում, ուրախութիւնն աւելի զօրեղ և կենդանի է լինում. եթէ անաջողութիւն է առաջ գալիս, այդ էլ մեծ հոգս չի պատճառում, գործը կարելի է շտկել և միարան ընդհանուր ուժերով աջող վախճանի հասցնել։

Չափազանց ցանկալի է, որ աշակերտներն իրանց մէջ կազմէին զանազան նպատակներ ունեցող միութիւններ, օրինակ՝ օտար լեզու, գիտութիւն, զեղարուեստ և արհեստներ սովորող, կենդանիներին հովանաւորող, չքաւորներին օգնող, ոտքով հեռաւոր ճանապարհներ կատարող և այլ այդպիսի միութիւններ։ Իւրաքանչիւր միութիւն պարտաւոր է մշակել իր գործունէութեան գլխաւոր հիմունքները և միութեան իւրաքանչիւր անդամը պարտաւոր է անթերի կատարել ընկերութեան իր վրա դրած բոլոր պարտաւորութիւնները. այլապէս արտաքսւում է անդամ լինելուց։ Այդ տեսակ աշակերտական միութիւնները ջատ են Անգլիայում, որտեղ հասարակական ինքնագործունէութիւնը բարձր զարգացման է հասել։ Անկասկած է, որ այդպիսի միութիւնները նախապատրաստում են հասարակական ինքնագործունէութեանը կեանքի մէջ։ Որովհետև այդ տեսակ միութիւնները բնական գործ են և ոչ թէ մասնաւոր սեփականութիւն անգլիացիների, ուստի նրանք

առաջ են գալիս և մեզանում, բայց դժբախտաբար սակաւ հովանաւորութիւն են գտնում ծնողների և ուսումնարանների ղեկավարների կողմից, երբեմն նկատւում են մինչև անգամ իբրև անպատշաճ երևոյթներ և հալածւում են։ Հազիւ թէ կարևոր լինի բացատրելու, որ մանուկների մէջ այդ տեսակ միութիւններն բնական են, մինչև անգամ անհրաժեշտ։ Երեխաների մէջ հանրակեցութեան զգացում զարգացնելու համար դժուար է ցոյց տալ դրանից աւելի յարմար մի միջոց, որ կարողանար աւելի ճիշտ և արագ հասցնել մտադրւած նպատակին։ Հարկաւոր է նկատել, որ այդ տեսակ միութիւններին մասնակցելը՝ ուսումնարանական կեանքը քաղցրացնում, դարձնում է նրան բովանդակալից և հետաքրքիր և ապագայում ծառայում է իբրև աղբիւր հաճելի և քաղցր յիշողութիւնների։

Արժէ յիշել Ս. Տ. Ակսակովի պատմածները Կազանում թատրոն հիմնելու և թիթեռնիկների ժողովածու կազմելու մասին, նոյնպէս՝ պրոֆեսոր Բոդդանովի պատմութիւնները Սիմբիրսկի պարտէզներում թռչուններ որսալու մասին։ Անշուշտ իւրաքանչիւր մէկը ունի այդ առարկային վերաբերեալ որև է քաղցր յիշողութիւն իր աշակերտական կեանքից։

Ուսումնարանում իբրև բնական միութիւններ դասարաններն են։ Իւրաքանչիւր դասարան ունի իր ընդհանուր շահերը՝ դասերը, ուսուցիչները, ընկերների յաճախ միևնոյն վարմունքը, ընդհանուր հանգստութիւնը, ընդհանուր շէնքը և այլն։ Կեանքի բոլոր այդ ընդհանուր պայմանները մօտեցնում են միևնոյն դասարանի

աշակերտներին, առաջացնում են միատեսակ շահեր, համակրութիւնների և հակակրութիւնների միատեսակ պատճառներ։ Այդ ընդհանուր շահերի հիման վրա, իւրաքանչիւր դասարան ներկայացնում է իրրև մի ինքնուրոյն հաւաքական ամբողջութիւն, որ ունի իր հոգևոր կերպարանքը, իր տարբեր յատկութիւնները, որոնցով խիստ և որոշ կերպով զանազանւում է բոլոր միւս դասարաններից։ Ուսումնարանների դեկավարները գըժբախտաբար նոյնպէս սակաւ ուշադրութիւն են դարձնում այդ ուսումնարանական բնական միութիւնների վրա, ինչպէս և ուշադրութիւն չեն դարձնում աշակերտների մէջ բոլոր միւս միութիւնները զարգացնելու վրա։ Այդ պատճառով էլ ուսումնարանների դասարանները լինում են անդոյն, միակերպ, մէկը միւսին շատ նման։ Շատ հազիւ է պատահում, որ ուսումնարանի մէջ մի որև է դասարան ունենայ իր առանձին որոշ կերպարանքը։ Մինչդեռ դասարանը կարող է մշակել իր ինքնուրոյն կերպարանքը, և այդ հնարաւոր է միայն բոլոր աշակերտների և աւելի իհարկէ՝ նրանց վարիչների միհամուռ եռանդուն ինքնագործունէութեամբ։ Դասարանը՝ ունենալով իր առանձին շահերը, պէտք է որ պաշտպանի նրանց թէ ուրիշների առաջ և թէ ուսումնարանի իշխանութեան առաջ, և դասարանի եռանդուն ինքնապաշտպանութիւնը պէտք է համարւի իրրև առաքինութիւն և ոչ թէ իրրև արատ, ինչպէս այդ սովորաբար ընդունւում է,

Երեխաների մէջ հասարակական ոգի, իրանք իրանց և ուրիշներին օգնելու ընդունակութիւններ

դաստիարակելու ժամանակ առաջ կըգայ մի էական դժուարութիւն, այդ այն է՝ որ աւագ սերունդն այդ գործի համար չունի ցանկալի յատկութիւնները։ Ինչպէս յայտնի է, երեխայի ամբողջ զարգացման ընթացքի վրա մեծ ազդեցութիւն է գործում մեծերի օրինակը, կազմութիւնը այն հասարակական շրջանի, որի մէջ երեխան ապրում է։ Եթէ աւագ սերունդը գլխից մինչև ոտքը լցած է եսական շահերով, եթէ նրանք անդադար խօսում ու մտածում են միայն իրանց մասին, եթէ հասարակաց շահը համարում են իրրև մի զառանցանք, որով լուրջ և գործի տէր մարդը չըպիտի զբաղուի, իհարկէ, այդ տեսակ հայրերը զաւակներին դժուար թէ ներշնչեն հասարակական ոգի. դրա համար հողը չափազանց անյարմար է, այստեղ չի աճի և չի զարգանայ հասարակական ձեռներէցութեան և հաստատամտութեան ընդունակութիւնը։

III

Ընտանեկան դաստիարակութեան երկրորդ հիմունքը

Մարդը՝ լինելով հասարակութեան անդամ, միևնոյն ժամանակ զաւակ է արտաքին բնութեան. նա մի հիւլէ է այն ահագին զանգուածի, որը կոչւում է տիեզերք, որի հետ մարդ ուզի-չուզի՝ շաղկապւած պիտի ապրի։ Տիեզերական օրէնքները ծանրացած են մարդու վրա անշեղ գծում են նրա զարգացման ուղին։ Այդ պատճառով սկզբնական կանոնաւոր դաստիարակութիւնը կարելի է իրագործել միմիայն անընդհատ յարաբերութեան մէջ գտնւելով բնութեան հետ։

Երեխաները վաղ մանկութիւնից սկսած, պէտք է մեծանան բնութեան ծոցում, գլխով-ոտքով պէտք է սուզուեն բնութեան մէջ։ Պէտք է հագեցուեն այն բոլոր տպաւորութիւններով, զգացողութիւններով ու մտքերով, որ բնութիւնը առաջացնում է ամեն մի կենդանի հոգու մէջ։ Երեխաները անպատճառ իրենք պէտք է զգան ձմեռւայ ցուրտը. մրսեն, ճնաղնդի խաղան, պաղի տան, գլորուեն ձիւնի մէջ, որպէսզի պարզ հասկանան ու զգան, թէ ինչպէս ցուրտը սառցնում է իրանց այտերն ու ականջները. նրանք պէտք է հրճուեն ամառուան վայելչութիւններով սունկեր և պտուղներ ժողովեն, լողան, նեղուեն շոգից, փախչեն, ապաստան գտնեն անտառի ստուերում, թրջուեն անձրևի տակ, ման գան ցեխերում. նրանք պէտք է կրեն ու զգան տարւայ բոլոր եղանակների առանձնայատկութիւնները, նրանց հաճելի և անհաճոյ կողմերը. նրանք իրանց աչքով պէտք է տեսնեն գիւղական աշխատանքները թէ դաշտում, թէ մարգագետիններում, թէ կալում, թէ ջրաղացում, պէտք է տեսնեն գիւղական տօնները, գիւղական կեանքը, որ այնքան մօտ է բնութեան. նրանք պէտք է տեսնեն արեգակի ծագումը, մայր մտնելը, աստղերը, լուսինը, մէկ խօսքով՝ երեխան պէտք է ընտելանայ բնութեան զանազան երևոյթներին։ Միայն այդ հանգամանքներում կարող կը լինեն զարգանալ նրա արտաքին զգացողութիւնները, միտքը կըմնի հասակին համապատասխան առողջ տպաւորութիւններով, և սիրտը կըզգայ մարդկային ամենապարզ ուրախութիւններն և տրտմութիւնները։

Շատ ցաւալի է, եթէ երեխան սկսում է ծանօթանալ բնութեանը պուրակներում և կենդանաբանական այգիներում։

Քաղաքն արհեստական միջնորմ է, որ բաժանում է երեխային բնութիւնից. պուրակները, կենդանաբանական այգիներն ամենևին չեն կարող փոխարինել արձակ, ազատ ու պարզ բնութիւնը։ Քաղաքի կեանքը, որ գիշերը դարձրել է արթնութեան և զարթնութիւնների ժամանակ, իսկ ցերեկւայ նշանաւոր մասը քնի ժամանակ, իր արհեստական և ուժեղ գրգռումներով, իր սահմանափակ տարածութեամբ, լոյսի, օդի և կանաչի բացակայութեամբ՝ մեծ արգելք է հանդիսանում երեխաների կանոնաւոր զարգացման։ Քաղաքը պէտք է թողնել հասակաւորներին՝ իրանց ժողովների, նիստերի, թատրոնական և այլ տեսարանների, գիտական աշխատանքների և այլն համար. իսկ երեխաներին պէտք է տանել մարգագետինները, դաշտերը, անտառները։ Մի խօսքով՝ բնութեան գիրկը։ Գիւղացին սովորաբար հանգիստ, նստած (уравновѣшенный) մարդ է, նա գիտի զարթնանալ բնութիւնով, գիտի համբերել, կուել և չարչարուել, գիւղի մարդը երկրի պաշարն է, նրա ուժերի և նորոգութեան աղբիւրն է։ Քաղաքները ծծում են գիւղի հիւթերը, իրանց գործարաններով և արհեստանոցներով փչացնում ու անբարոյականացնում են գիւղացուն. քաղաքները թէև ստեղծում են, ինչպէս ասում են, կուլտուրա, բայց իրապէս իրանց էութեամբ անյարմարութիւններ և արգելքներ են առաջացնում կեանքի կանոնաւոր զարգացման համար։ Քաղաքի մար-

գիկ միշտ յուզված, գրգռված, անբաւական և նեարդային են. կարծես միշտ մի բանի քամակից ընկած վազում են, բայց նրան չեն հասնում. չնչին բաների համար միշտ միմեանց հետ մրցում, թշնամանում, վերջն էլ գերեզման են իջնում ապշած, որ իրենց կեանքը լցած է եղել միմիայն ոչնչութեամբ։ Բընութեան հետ յարաբերութիւնը մարդուն՝ տիեզերքի հիւլէին՝ յատկացնում է իր որոշեալ տեղը, սովորեցնում է նրան անվրդով հնազանդուել բնութեան օրէնքներին լինել քաջ տանջանքների և մահուան ժամանակ։ Այն մարդը, որի արմատները հողի մէջ են հաստատուած, չի ընկնում անհասկանալի զառանցանքների ետևից և ոչ էլ երկիւղ կրում որ և է բանից։

Քաղաքակրթութեան և հասարակական կեանքի ներկայ վիճակում, ի հարկէ, երեխաների ահագին բազմութիւն դատապարտուած է մեծանալու և զարգանալու քաղաքներում. հետևաբար հարկաւոր է հոգ տանել նրանց մասին, օգնութեան հասնել, ցոյց տալ միջոցներ, որոնք գէթ որոշեալ չափով՝ նրանց համար փոխարինէին բնութեան մէջ անմիջական կեանքը. օրինակ՝ կազմակերպել ամառնային զբօսանքներ, հաստատել տնային աւարիումներ, տիրարիումներ և այլն։

Այդպէս ընտանեկան դաստիարակութեան ամենաբարձր և ընդհանուր (մասնաւոր նպատակների մասի չենք խօսում) նպատակն է, որ դաստիարակութեան բոլոր միջոցներին տրւի բնական, օրգանական եւ անհատական բնաւորութիւն, և այդ նպատակը կարելի է իրագործել միմիայն այն ժամանակ, երբ դաստիարակող

մանուկն իր կեանքն ու գործունեութիւնն անցնում է հասարակիցների շրջանում (վարում է հասարակական կեանքը) եւ անմիջական յարաբերութեան մէջ է գտնւում արտաքին բնութեան հետ։

Թարգմ. Միս. Ա.

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՅՐՍՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Ա. ՍՅԱՍ. Ի ՅԱՆԻ ԱՇԿԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1. Ընտանեկան դաստիարակութեան արհեստականութիւնը և նրա տեսակները 3
2. Ընտանեկան դաստիարակութեան առաջին հիմունքը 28
3. Ընտանեկան դաստիարակութեան երկրորդ հիմունքը 43

Բաղուի Հայոց
Հոիփարեանի Դպրոց
Եկեղ.-ծխակ. (տիրոյթ)

ՀՀ Ազգային գրադարան
NL0226269

52.135

Լոյս տեսան «Հասակերբ»

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

I Երեխայի կրթութիւնը մինչև 6-տարեկան հասակը— Հենրիկ Վերնիցի. թարգմ. Ստ. Լիսիցեանի 25 կ.

II Երեխայի քունը—Վիրենիուսի, թարգմ. Ստ. Լիսիցեանի: . . . . . 15 կ.

III Երեխայի ազատութիւնը, Կ. Հ. Վենտցելի.—Մեծերն ու փոքրերը—տիկ. Իսահակսէնի. թարգմ. Ստ. Լիսիցեանի: . . . 15 կ.

IV Սովորութիւնները, նրանց նշանակութիւնը ու կրթութիւնը—Կ. Եշնիցկու, թարգմ. Մ. Ադ. և Ստ. Լ. . . . . 15 կ.

V Պարգևներն ու պատիժները ընտանեկան դաստիարակութեան մէջ—Ֆեսենկոի, թարգմ. Մ. 15 կ.

VI Ո՞րտեղից է աշխարհ եկել քո փոքրիկ եղբայրը— Գալանդաուէրի, թարգմ. տ. Հ. Թոփչեանի: Ծանօթացրէք կեանքի ծաղման հետ—Տիկ. Սելմերի, թարգմ. Ստ. Լ. . . . . 15 կ.

ԳԻՆՆ Է 15 ԿՈՊ.

Ճանապարհածախսը՝ խմբագրութեան վրա է

Тифлисъ, Редакція «Аскеръ».